պատեր։ Ադրբեջանցիք սիրում են հացը թխել օջախին դրած սաջի վրա, որը հարկ եղած ժամանակ շուռ տված դրությամբ փոխարինում է թավային։

Սարում ալաչուխնէրը ձգվում են իրար քով, սովորաբար պահպանելով նույն հարևանությունն. ինչ որ ունենում են գյուղում։ Զանգեզուրի հայերի բինանէրն այնքան էլ ընդարձակ չեն լինում, որչափ ադրբեջանցիներինը, որոնց մեջ վրանները մեծ մասամբ դասավորվում են մի որոշ կանոնավորությամբ, նույնիսկ շարքերով։ Այդ կանոնավորությունը չի պահպանվում հայկական օբանէրում։

Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ անցյալում, եթե տան կամ վրանի տեղը վրա չի յէկել՝ բախտավոր չի եղել տանեցոց կամ անասունի համար, օրինակ՝ եթե այդտեղ բնակվելուց հետո եղել են տանեցոց կամ անասունի մեջ հաճախակի մահացության դեպքեր կամ անհաջողություններ, Զանգեզուրում այդ վերագրել են տան կամ վրանի համար ընտրված տեղի՝ ասաբ-ծուն կամ բարի ֆրեշտակներին, անհաճո լինելուն և փոխել են վրանի, ավելի դժվարությամբ՝ նաև տան տեղը։ Որպեսզի տունը միջի ապրողների համար բախտավոր լիներ, սովորություն է եղել հրավիրել քահանային հիմքի առաջին քարն օրհնելու համար և, բացի այդ, հիմքի տակ մի որևէ, երբեմն ոսկե, դրամ են դրել։ Ավարտելուց հետո մատաղ են մորթել ի հիշատակ տան մեռելների։ Նոր տուն շինողի սեղանի վրա դրած են պահել կամ պատից կախել են նախշուն ասեղնագործությամբ պատած ձու, որ մտնողի չար աչքը նախ նա գրավի։ Նույն նպատակով, աչքով չտալու համար, առհասարակ մուտքի գլխին կամ այլ երևացող մի տեղ կախել են սիրած տավարի գլուխը կամ ոզնու ասեղոտ մաշկի մի կտոր։

Տան կառուցման միջոցին դիմել են հարևանների, ազգականների, բարեկամների օգնության, իսկ որմնադրության կամ ատաղձագործության՝ դուռ, պատուհան, առաստաղ և այլն մասնագիտական փորձառություն պահանջող մասերը շինելու համար հրավիրել են հատուկ վարպետներ։

Ընտանիքից բաժանվող անդամը ձգտում էր իր բնակարանը հաստատել հայրական տնից ոչ հեռու՝ վերածելով գոմը կամ տնտեսական շենքն իր նոր բնակարանի, մանավանդ որ բաժանվելուց հետո էլ եղբայրներն ու ազգականները շարունակում էին նյութապես և այլ կերպ փոխադարձաբար օգնել։

Նոր բնակարան կառուցելիս սովորություն էր հին բնակարանից կրակ վերցնելը։ Նույնպես և բաժանվող անդամն իր նոր օջախի կրակը վառում էր տոհմական տանից բերած կրակով։